ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քննարկելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտի կառավարման մարմինների եւ վարչությունների ղեկավարների առաջարկությունները երկաթուղային տրանսպորտը համակարգող մարմինների մասին՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարները,

ձգտելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միասնական տնտեսական տարածության շրջանակներում կայուն տնտեսական կապերի ապահովմանը եւ դրանց ամրապնդմանը,

հիմնվելով Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրի 7-րդ հոդվածի վրա,

հաշվի առնելով միասնական երկաթուղային ցանցի եւ դրա շահագործման ձեւավորման գործընթացում կուտակված փորձը, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

1. Հիմնել Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտի կառավարման մարմիններից եւ վարչության ղեկավարներից բաղկացած երկաթուղային տրանսպորտի խորհուրդ միջպետական մակարդակով երկաթուղային տրանսպորտի աշխատանքի համակարգման եւ դրա գործունեության համաձայնեցված սկզբունքների մշակման համար:

2. Երկաթուղային տրանսպորտի խորհրդին հանձնարարել.

2.1. մեկամսյա ժամկետում տրանսպորտը համակարգող խորհրդի հետ համատեղ մշակել Խորհրդի մասին Կանոնադրություն եւ այն ներկայացնել հաստատման,

2.2. երկաթուղային ճանապարհների շահագործման գործունեության համակարգման, Համագործակցության պետությունների միջեւ ուղեւորների եւ բեռների փոխադրումների կազմակերպումը կարգավորող նորմատիվ ակտերի մշակման համար ստեղծել երկաթուղային տրանսպորտի Խորհրդի գործադիր կոմիտե,

2.3. մեկամսյա ժամկետում մշակել գործադիր կոմիտեի Կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պահպանման ծախսերի նախահաշիվը ու ֆինանսավորման կարգը եւ այն ներկայացնել հաստատման:

3. Գտնվելու վայր սահմանել քաղաք Մոսկվան:

Կատարված է Մինսկ քաղաքում 1992 թվականի փետրվարի 14-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն:

Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը դրա հավաստված պատճենը կուղարկի սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի փետրվարի 14-ից: